ՉԱՓԱՆԻՇ IV. ՈՒՍԱՆՈՂՆԵՐԸ

ՉԱՓԱՆԻՇ: ***ՄՈՒՀ-ն ուսանողներին տրամադրում է համապատասխան աջակցություն՝ կրթական միջավայրի արդյունավետությունն ապահովելու նպատակով:***

Որպես իր առաքելության կարևորագույն մաս՝ մասնաճյուղն իր ռազմավարությամբ միտված է *դառնալու ուսանողակենտրոն միջավայր*, որակյալ կրթական ծառայությունների մատուցման համար **ստեղծել** այնպիսի պայմաններ, որոնք հնարավորություն կտան ուսանողին առավելագույնս իրագործելու իր ուսումնառության նպատակը՝ ձեռք բերել անհրաժեշտ գիտելիքներ ու հմտություններ, **բավարարել** ուսանողների ներկա և հեռանկարային պահանջմունքները:

Մասնաճյուղը կրթության որակի ապահովման հարցում վարում է հստակ քաղաքականություն և նրա կրթական գործունեության գերակա նպատակը դա կրթական ծառայությունների որակից ուսանողների բավարարվածությունն է: Այն ենթադրում է ուսանողների կրթական կարիքների վերհանում, կրթական գործընթացի ուսումնամեթոդական և նյութատեխնիկական ապահովվածության մակարդակի շարունակական բարձրացում:

ՉԱՓՈՐՈՇԻՉ ա. ՄՈՒՀ-ում գործում են ուսանողների հավաքագրման, ընտրության և ընդունելության իրականացման հստակ մեխանիզմներ:

Մասնաճյուղի վարած քաղաքականությունը ուսանողների հավաքագրման, ընտրության և ընդունելության ուղղությամբ ամրագրված է զարգացման ռազմավարական ծրագրի 7-րդ նպատակում («Ընդլայնել մասնաճյուղի ընդունելության պրոֆիլը և այն համապատասխանեցնել տարածաշրջանի տնտեսական զարգացման կարիքներին և աշխատաշուկայի պահանջներին»), «Երևանի պետական համալսարան» հիմնադրամի Իջևանի մասնաճյուղի կանոնադրության («III. ԵՊՀ ԻՄ-Ի ԳՈՐԾՈՒՆԵՈՒԹՅԱՆ ՆՊԱՏԱԿԸ ԵՎ ԻՐԱՎԱՍՈՒԹՅՈՒՆԸ», 13/4) և կրթության որակի բնագավառում մասնաճյուղի քաղաքականության մեջ («Դիմորդներին ապահովել ընդունելության կանոնակարգերի ուղեցույցներով»):

Ուսանողների հավաքագրման գործընթացն արդյունավետ կազմակերպելու նպատակով 2012թ. սեպտեմբերին մասնաճյուղի Գիտական Խորհրդի որոշմամբ Ուսումնամեթոդական վարչության կազմում ստեղծվել է Մինչհամալսարանական կրթության և մասնագիտական կողմնորոշման բաժինը ***(ԳԽ, 17.09.2012թ., թիվ 4 նիստ)***, որը 2014թ.-ի հունվարին վերակազմավորվել է Մասնագիտական կողմնորոշման և պրակտիկայի կազմակերպման (ՄԿՊԿ) բաժնի ***(2014թ. հունվարի 8-ի տնօրենության նիստ):***

Քանի որ մասնաճյուղի դիմորդների **90%-ից** ավելին կազմում են Տավուշի մարզի դպրոցների շրջանավարտները ***(ԳԱՅ 2011-2016, Յուցանիշ 1.3)*** ՄԿՊԿ բաժինը դիմորդների հավաքագրման և մասնագիտական կողմնորոշման ուղղությամբ նպատակային աշխատանքներ է կատարել մարզում՝ նախապես մշակված ժամանակացույցով կազմակերպելով հանդիպումներ մարզի դպրոցներում:

Հանդիպումների շնորհիվ՝ դիմորդները, անմիջական շփման պայմաններում, մասնակցելով քննարկումներին, ստացել են իրենց հետաքրքրող բոլոր հարցերի պատասխանները՝ կապված ընդունելության կարգի, մասնաճյուղում իրականացվող կրթական ծրագրերի, ուսման վարձերի զեղչման, ուսանողական նպաստների տրամադրման, առկա համակարգում փոխատեղման կարգի, ուսումնառության պայմանների, մասնաճյուղի գրադարանի, պաշտոնական էլ. կայքի և այլնի հետ:

Հանդիպումների ժամանակ դիմորդներին տրամադրվել են ԵՊՀ հրատարակած «Դիմորդի ուղեցույց»-ը, ԵՊՀ Իջևանի մասնաճյուղի և կիրառական արվեստի ֆակուլտետի

գովազդային բուկլետները, վերջին տարին նաև հեռակա ուսուցման համակարգի մասին իրազեկող բուկլետը, պլանավորում է նկարահանել մասնաճյուղի մասին տեսաֆիլմ:

Մասնաճյուղի կայքէջում դեռևս 2011թ.-ից ստեղծվել է "Դիմորդ" բաժինը՝ "Առկա ուսուցում" և "Հեռակա ուսուցում" ենթաբաժիններով: Յուրաքանչյուր ենթաբաժնում տեղադրվում է դիմորդներին վերաբերող համապատասխան արդիական տեղեկատվությունը՝ մասնագիտությունների ցանկի, ընդունելության կարգի, պահանջվող փաստաթղթերի, ընդունելության քննությունների, տեղերի, ուսման վարձաչափերի և այլնի վերաբերյալ:

2011 թվականից սկսած՝ ԵՊՀ-ի հետ համատեղ դպրոցների բարձր դասարանների աշակերտների համար հանրակրթական բոլոր առարկաներից մասնաճյուղում կազմակերպվում են ամենամյա դպրոցական <u>օլիմպիադաներ</u>, որի շնորհիվ մասնակիցները հնարավորություն են ստանում ծանոթանալ մասնաճյուղին, ուսումնառության պայմաններին, դասախոսներին:

Դիմորդների հավաքագրման գործընթացի արդյունավետությունը բարձրացնելու համար յուրաքանչյուր ուստարվա հոկտեմբեր և մարտ ամիսներին կազմակերպվում է «Բաց դռերի օր», 2013թ.-ից մասնաճյուղի դասախոսների կողմից իրականացվում են <u>ակնարկային դասախոսություններ Իջևանի և Բերդավանի</u> ավագ դպրոցների 12-րդ դասարաններում, 2014-15 ուստարվանից Կիրառական արվեստի ֆակուլտետի դիմորդների համար իրականացվում են <u>նախապատրաստական դասընթացներ «Գծանկար», «Գունանկար» և «Կոմպոզիցիա» առարկաներից</u>, 2015թ. ապրիլի 21-ին մեկնարկած <u>Անգլերեն լեզվի ուսուցման եռամսյա դասընթացում</u> ընդգրկվել են Իջևանի դպրոցների 11-12-րդ դասարանների աշակերտներ:

Դիմորդների հավաքագրման գործընթացին.

- նպաստում են տարբեր հեռուստաընկերությունները և լրատվական կայքերը՝ մասնաճյուղի մասին իրենց պարբերաբար լուսաբանումներով,
- նպաստում է մատչելի վարձավճարի, ուսման վարձի մասնակի փոխհատուցման, ներբուհական կրթաթոշակների հատկացման մասնաճյուղի վարած քաղաքականությունը,
- աջակցում է ընդունելության քննությունների թեթևացմանը միտված և՛ պետական, և՛ մասնաճյուղի վարած քաղաքականությունը (3 մասնագիտությունների համար ընդունելության մրցութային քննություններից մեկական առարկաներ փոխարինվել են ոչ մրցութայինով (<u>երկու աստղանիշով</u>)՝ միայն վճարովի ուսուցման համակարգում ընդունվելու համար),
- կաջակցեն նաև պլանավորվող <u>նախապատրաստական դասընթացները</u>:

ՄՄՈՒՀ-երի բարձր առաջադիմություն ցուցաբերած շրջանավարտների ուսուցման (բարձրագույն կրթություն ստանալը) շարունակությունը մասնաճյուղում իրականացվում է ՀՀ Կառավարության 2002թ. մայիսի 20-ի №589 որոշմամբ ընդունված «ՄՄՈՒՀ-ի բարձր առաջադիմություն ցուցաբերած շրջանավարտների՝ համապատասխան բուհ-ում ուսուցումը շարունակելու» կարգի համաձայն:

Մինչև 2011թ. մասնաճյուղում շարունակական կրթություն են ստացել միայն Իջևանի տարածաշրջանային քոլեջի շրջանավարտները: Ուսանողների ընտրության գործընթացի կազմակերպման նպատակով 2011թ. ԵՊՀ-ի Իջևանի մասնաճյուղը, ըստ ՀՀ կրթ. գիտ. նախ. 2007թ. մարտի 9-ի N 137 Ա-Ք հրամանի, պայմանագրեր է կնքել Արարատի, Տավուշի տարածաշրջանային և Դիլիջանի, Նոյեմբերյանի, Բերդի պետական քոլեջների հետ, որը հնարավորություն է տալիս բարձր առաջադիմություն ցուցաբերած շրջանավարտներին հարցազրույցով ընդունվել մասնաճյուղ և շարունակել ուսումը համապատասխան

մասնագիտությամբ: Եթե 2008-2010թթ. մասնաճյուղում իրենց կրթությունն են շարունակել Իջևանի տարածաշրջանային քոլեջի ընդամենը 6 շրջանավարտ, ապա ձեռնարկված քայլերի արդյունքում 2011–2015թթ. մասնաճյուղում շարունակական կրթություն են ստացել վերոնշյալ քոլեջների 47 շրջանավարտներ.

	ՇԱՐՈՒՆԱԿԱԿԱՆ ԿՐԹՈՒԹՅՈՒՆ					
	Հաստատություն/երկիր	**2008**	**2009**	**2010**	**2011**	**2012**
1.	Իջևանի տարածաշրջանային քոլեջ / ՀՀ	1	1	4	-	2
2.	Տավուշի տարածաշրջանային պետական քոլեջ / ՀՀ	-	-	-	1	-
3.	Նոյեմբերյանի պետական քոլեջ / ՀՀ	-	-	-	1	-
4.	Արարատի տարածաշրջանային պետական քոլեջ /ՀՀ	-	-	-	1	-
5.	Դիլիջանի պետական քոլեջ / ՀՀ	-	-	-	1	-
6.	Բերդի պետական քոլեջ / ՀՀ	-	-	-	-	1

Հավաքագրման և ընտրության արդյունավետությունը և թափանցիկությունը ապահովելու նպատակով՝ մասնաճյուղը համագործակցում է համապատասխան քոլեջների հետ. ուսումնական պլանների և առարկայական ծրագրերի փոխհամաձայնեցման և վերամշակման աշխատանքներում, ուսումնական գործընթացն ավելի արդյունավետ կազմակերպելու նպատակով ցույց է տալիս համապատասխան մեթոդական և մասնագիտական օգնություն՝ դասախոսությունների, դասալսումների իրականացում, կիսամյակային քննություններին մասնակցություն, մասնաճյուղի գրադարանի ռեսուրսների հասանելիություն, քոլեջների պետական որակավորման հանձնաժողովների կազմում մասնաճյուղի համապատասխան մասնագետների ընդգրկվածություն և այլն:

Դիմորդների ընդունելությունը մասնաճյուղի բակալավրի կրթական ծրագրի առկա ուսուցման համակարգ իրականացվում է ՀՀ Կառավարության 26.04.2012 թ. որոշմամբ հաստատված «Պետական և ոչ պետական բարձրագույն ուսումնական հաստատությունների ընդունելության (ըստ բակալավրի կրթական ծրագրի) կարգի» համաձայն: Այս գործընթացներում մասնաճյուղի մասնակցությունը խիստ սահմանափակ է. այն ընդամենը ներկայացնում է առաջարկ ընդունելության տեղերի, քննությունների և վարձավճարների չափերի վերաբերյալ:

Բակալավրիատի հեռակա ուսուցման համակարգում ընդունելությունն իրականացվում է ՀՀ կրթության և գիտության նախարարի 2012 թ. հուլիսի 27-ի հրամանով հաստատված «ՀՀ պետական բարձրագույն ուսումնական հաստատությունների հեռակա ուսուցման ընդունելության կանոններով», համաձայն որի՝ ընդունելության մասնագիտությունների ցանկը և հատկացվող տեղերի քանակը հաստատվում են ՀՀ կրթության և գիտության նախարարի հրամանով: Մրցույթներն իրականացվում են ըստ մասնագիտությունների, ՀՀ ԿԳ նախարարության կողմից ներկայացված և ՀՀ կառավարության կողմից հաստատված քննությունների ցանկի և կանոններին համապատասխան:

Հեռակա ուսուցման համակարգի դիմորդների հավաքագրման գործընթացի բարելավման համար բացվել են «Սերվիս» (2012թ.) և «Անգլերեն լեզու և գրականություն» (2013թ.) մասնագիտությունները, վերափոխվել են 3 մասնագիտություններ:

Հեռակա ուսուցման համակարգ ընդունելության հավասար դաշտի ապահովման նպատակով քննական թեստերը կազմվում են առկա ուսուցման թեստերին համապատասխան, արդյունքները փակցվում են և հրապարկվում, նախատեսվում է ընդունելության քննությունների

ժամանակ լսարաններում տեղադրել տեսախցիկներ՝ հնարավորություն ընձեռելով ծնողներին և դիտորդներին հետևելու քննական պրոցեսին:

Հաշվի առնելով այն, որ ԵՊՀ-ն չունի «Կիրառական արվեստ» մասնագիտությամբ մագիստրատուրա, 2012թ. մասնաճյուղում բացվել է համապատասխան մասնագիտությամբ մագիստրատուրա (գիտխորհրդի թիվ 2 նիստ, 12.05.2012թ.): 2012թ. նախատեսված 12 տեղի համար դիմել են 11 դիմորդ, իսկ 2013թ.-ին՝ 4 դիմորդ, որոնք բոլորն էլ ընդունվել են: 2014թ. -ից մագիստրատուրայում ընդունելությունը ժամանակավորապես դադարեցվել է:

Ներկայացնենք հեռացումների և վերականգնումների պատճառները և տվյալ խնդիրների լուծման տարբերակները:

Ուսանողների ակադեմիական շարժունությունը (տեղափոխությունները) իրականացվում է ՀՀ Կառավարության 2011թ. օգոստոսի 25-ի №1240-Ն որոշմամբ հաստատված «Բուհ-ում սովորողների ակադեմիական շարժունության» կարգի համաձայն:

Ուսանողների հեռացումներն ու վերականգնումներն իրականացվում են ՀՀ ԿԳ նախարարի 2011թ. նոյեմբերի 17-ի թիվ 1242-Ն հրամանով հաստատված «ՀՀ բուհ-ում ուսանողների հեռացման (ազատման) և վերականգնման» կարգի համաձայն: Դուրս մնացած և վերականգնված ուսանողների թվերը և տոկոսները ներկայացված են ***Հավելված 4.1-ում:***



Նկար 4.1-ում ներկայացված է դուրս մնացած և վերականգնված ուսանողների տոկոսները 2010-2014թթ.: Հեռացված ուսանողների տոկոսը նվազման միտում ունի, որին նպաստում են մասնաճյուղում իրականցվող մի շարք գործընթացներ (խորհրդատվական ծառայությունները (տես չափորոշիչ Գ-ն), բարձր առաջադիմությամբ սովորող ուսանողների կողմից տարվող աշխատանքներն իրենց համակուրսեցիների հետ և այլն):

ՈՒՄՎ-ի կողմից հեռացման պատճառների ուսումնասիրությունները թույլ են տվել վեր հանել դրանցից երեք հիմնականները՝ անբավարար առաջադիմությունը, ուսման վարձը չվճարելը, ներքին կանոնադրության խախտումը (բացակայությունները և այլն):



2008թ.-ից ֆակուլտետներում ներդրվել է ուսանողների բացակայությունների հաշվառման էլեկտրոնային համակարգ, որը հնարավորություն է տալիս վերահսկել ուսանողների բացակայությունների ժամաքանակները և կանխարգելել անհարգելի բացակայությունների պատճառով ստացած նկատողությունները և հեռացումները:

Մասնաճյուղում, ըստ ԵՊՀ ԻՄ ուսանողական նպաստների, պետական և ներբուհական կրթաթոշակների հատկացման կանոնակարգի, գործում է ուսման վարձի մասնակի, լրիվ փոխհատուցման, ներբուհական և անվանական կրթաթոշակների հատկացման ճկուն մեխանիզմ, որը նպաստում է ուսման վճարը չմուծելու պատճառով հեռացումների կրճատմանը (վերջին 4 տարիներին՝ 33%-ով, Նկար 2.):

Ուսանողների շարժի վերլուծությունը ցույց է տվել, որ վերջին 5 տարիներին ուսանողների ներհոսքը գերազանցել է արտահոսքին *(Հավելված 4.1.բ)*: Հիմնականում ուսանողների արտահոսքը և ներհոսքը պայմանավորված է բնակավայրի փոփոխմամբ, սոցիալական խնդիրներով և այլն:

Նկար 3. ԵՊՀ ԻՄ-ի ուսանողների արտահոսքը և ներհոսքը 2010-2014թթ.



Վերջին 5 տարիներին ԵՊՀ ԻՄ վերականգնված ուսանողների տոկոսը համեմատաբար կայուն է: Ուսանողները հիմնականում վերականգնվում են հեռակա ուսուցման համակարգում:

Նկար 4. Վերականգված ուսանողների թիվն ըստ պատճառների



Հեռակա ուսուցման համակարգի ուսանողների թիվը ընդհանուր համակազմում աճման միտում ունի *(ԳԱՅ, ցուցանիշ 1.12)*: Դա պայմանավորված է հեռակա ուսուցման համակարգում նոր մասնագիտության ավելացման, ուսանողների՝ հիմնականում հեռակա ուսուցման համակարգում վերականգնման, երկրորդ մասնագիտության ձեռքբերման, 2011-2012թ. հանրակրթական դպրոցների շրջանավարտ չունենալու հետ և սոցիալական խնդիրների հետ և այլն:

Մասնաճյուղում ուսանողների հավաքագրման, ընտրության և ընդունելության իրականացման մեխանիզմների արդյունավետության գնահատման համար հիմք են հանդիսանում գնահատման առանցքային ցուցանիշները *(ԳԱՅ, ցուցանիշ 1.1)*, մասնաճյուղում իրականացվող «ԵՊՀ ԻՄ-ի վերաբերյալ արտաքին շահակիցների կարծիքի ուսումնասիրության» և «ԵՊՀ ԻՄ-ում ստացած կրթությունից շրջանավարտների բավարարվածության գնահատման» հարցումները:



Բոլոր տարիների հարցումների արդյունքները ցույց են տալիս, որ հարցվածների գերակշիռ մասը (89.8% - 91.8%) պատասխանել են, որ խորհուրդ կտան իրենց մերձավորներին կամ ընկերներին դիմել մասնաճյուղ:

ՉԱՓՈՐՈՇԻՉ բ. ՄՈՒՀ-ն ունի ուսանողների կրթական կարիքների վերհանման քաղաքականություն և ընթացակարգեր:

Վերլուծենք ուսանողների կարիքների վերհանման ՄՈՒՀ-ի քաղաքականության և ընթացակարգերի իրականացման մեխանիզմների արդյունավետությունը:

Մասնաճյուղի առաքելության իրականացման կարևոր նախապայման է ուսանողակենտրոն միջավայրի ապահովումը, որի հիմքում ուսանողների կարիքների վերհանումն ու դրանց բավարարումն է:

Մասնաճյուղի վարած քաղաքականությունը ուսանողների կրթական կարիքների վերհանման ուղղությամբ ամրագրված են ՌԾ-2011-2015–ի VI՝ «Որակյալ ծառայություններ» նպատակում և կրթության որակի ապահովման բնագավառում մասնաճյուղի քաղաքականության մեջ:

Մասնաճյուղում ուսանողների կրթական կարիքների վերհանման համար գործում են մի շարք մեխանիզմներ:

Ուսանողներն ընդգրկված են մասնաճյուղի և ֆակուլտետների գիտական խորհուրդների կազմերում (25%), որի շնորհիվ լսելի են դարձնում ուսանողների ձայնը ***(Գիտխորհրդի 27.12.2010թ. թիվ 8 նիստ)***: Մասնավորապես, գիտխորհրդի թիվ 5 նիստում (09.09.2011թ.) ներկայացվել է գրադարանում էլեկտրոնային մասնագիտական գրականության համալրման, դասախոսությունների էլեկտրոնային տարբերակների առկայության հարցերը: Ներկայումս գրադարանում առկա են և շարունակաբար համալրվում են դասախոսությունների և մասնագիտական գրականության էլեկտրոնային պաշարները:

Յուրաքանչյուր ամիս, կուրսերի ավագները և ուսանողական կառույցների ներկայացուցիչները հանդիպում են մասնաճյուղի տնօրենի հետ՝ քննարկելու իրենց խնդիրներն ու առաջարկները:

Ուսանողների կրթական կարիքների վերհանումը Ուսանողական խորհրդի գործունեության հիմնական ուղղություններից և նպատակներից է («ԵՊՀ ԻՄ-ի ուսանողական խորհրդի կանոնադրություն», 2-րդ կետ): Ուսանողները Ուս. խորհրդին հիմնականում դիմում են բանավոր, վերհանված խնդիրները հնարավորության սահմաններում լուծվում են անմիջապես, հակառակ դեպքում՝ քննարկվում ՈՒԽ ընդլայնված նիստերում, ներկայացվում ֆակուլտետների և մասնաճյուղի գիտական խորհրդների նիստերում:

Մասնավորապես, Հումանիտար գիտությունների ֆակուլտետի գիտական խորհրդի 28.04.2014թ. թիվ 27 նիստում ուսանողների առաջարկով առանձին առարկաների համար փոխվել են թեստերի կառուցվածքն ու բովանդակությունը, գնահատման կարգը:

Ֆակուլտետներում ներդրված ուսումնական խորհրդատուների ինստիտուտը («ԵՊՀ ԻՄ-ում ուսումնական խորհրդատուների գործունեության կանոնակարգ», 3-րդ և 5-րդ կետեր) ուսանողների կրթական կարիքների արդյունավետ, օպերատիվ վերհանման հնարավորություններից է *(մանրամասն ներկայացված է **Չափորոշիչ 4.գ-ում):***

Ուսանողներն իրենց հուզող հարցերով կարող են դիմել նաև մասնաճյուղի բոլոր ստորաբաժանումներին *(մանրամասն ներկայացված է **Չափորոշիչ 4.դ-ում):***

Ուսանողների կրթական կարիքները վեր են հանվում մասնաճյուղում իրականացվող հարցումների միջոցով՝ ԵՊՀ ԻՄ-ից ուսանողների բավարարվածության ուսումնասիրության, ԵՊՀ ԻՄ-ի կողմից կազմակերպված պրակտիկայի գնահատման, ԵՊՀ ԻՄ-ում ուսանողների գնահատման վերաբերյալ, դասավանդման որակի և արդյունավետության վերաբերյալ, ԵՊՀ ԻՄ-ում ստացած կրթությունից շրջանավարտների բավարարվածության, ԵՊՀ Իջևանի մասնաճյուղի շրաջանավարտների և պրակտիկանտ - ուսանողների վերաբերյալ արտաքին շահակիցների կարծիքի ուսումնասիրության: Հարցումներն սկսվել են իրականացվել 2009թ.-ից: Հարցաթերթերի առաջարկությունների բաժնում ուսանողները ներկայացրել են առաջարկություններ, որոնք հիմնականում վերաբերել են մասնագիտական առարկաների, գործնական և սեմինար պարապմունքների ժամաքանակների ավելացմանը, գնահատման համակարգերին, մասնագիտական գրականության ավելացմանը, լաբորատորիաների սարքավորումներով հարստացմանը, պրակտիկայի անցկացման արդյունավետությանը և այլն/: Հարցումների արդյունքները քննարկվում են Մասնագիտական կրթության որակի ապահովման բաժնում, և ուղղորդվում համապատասխան բաժիններ:

2012թ.ից ֆակուլտետներում տեղադրված են «Արագ արձագանքման արկղեր», որոնք ուսանողներին հնարավորություն են տալիս դիմում-առաջարկներով բարձրացնել իրենց հուզող հարցերն ու խնդիրները: Մասնավորապես, ուսանողները դիմել էին պրակտիկ մասնագետների օնլայն դասախոսությունների անցկացման հարցով: Հարցը քննարկվել է Տնտեսագիտության ֆակուլտետի խորհրդի թիվ 9 նիստում (28.06.2012թ.) և ավարտական կուրսերի համար բանկային համակարգում փորձառու մասնագետի կողմից իրականացվել է "Բանկեր և բանկային գործ" պրակտիկ ուղղվածության դասընթացը: Ներկայումս մասնաճյուղը նախատեսում է յուրաքանչյուր մասնագիտության համար որոշակի թվով դասընթացներ իրականացնել օնլայն տարբերակով:

2011-2013թ. մասնաճյուղում իրականացվել են շաբաթական հանդիպումներ մասնաճյուղի բարձր առաջադիմություն ունեցող ուսանողների ֆոկուս-խմբի հետ, որի ժամանակ քննարկվել են կրթական միջավայրի բարելավման և որակի ապահովման հարցեր: Մասնավորապես, Հումանիտար գիտ. ֆակուլտետում լինգաֆոնային լսարանի անհրաժեշտության հարցի լուծման ուղղությամբ մասնաճյուղում բացվել է անգլերենի ռեսուրս կենտրոն (Օտար լեզուների ամբիոնի 03.06.2013թ. թիվ 11 նիստ) և ֆրանսերեն լեզվի լսարան (Օտար լեզուների ամբիոնի 21.03.2013թ. թիվ 8 նիստ)՝ հագեցած անհրաժեշտ տեխնիկայով և գույքով:

Ուսանողներն իրենց կարիքների մասին կարող են հարցեր ուղղել մասնաճյուղի պաշտոնական կայքէջի «Ուղղել հարց» բաժնին: Ստացված հարցերն ուղղորդվում են համապատասխան բաժիններ և պատասխանի հետ տեղադրվում կայքի “Հարց-պատասխան”

բաժնում: Այս մեխանիզմը գործում է 2012թ. սեպտեմբերից, և 2015թ. օգոստոս ամսվա դրությամբ տեղադրվել է **39** հարցուպատասխան:

Ուսանողների կրթական կարիքների մեխանիզմների արդյունավետության գնահատման համար Մասնագիտական կրթության որակի ապահովման բաժինը 2012թ.-ից սկսած կատարել է տարբեր մեխանիզմներով վերհանված ուսանողների կրթական կարիքների մասին տեղեկատվության հավաքագրում, ամփոփում, վերլուծություն:

Գործող մեխանիզմներից պակաս արդյունավետ է համարվել արագ արձագանքման արկղը, առավել արդյունավետ մասնաճյուղում իրականացվող հարցումները:

Նկար 1. ԵՊՀ ԻՄ-ում ստացած կրթությունից շրջանավարտների բավարարվածության գնահատման հարցման արդյունքներից



Ըստ ԵՊՀ ԻՄ-ում ստացած կրթությունից շրջանավարտների բավարարվածության գնահատման հարցման վերջին երկու տարիների արդյունքների՝ ուսանողները բավարարված են իրենց կրթական կարիքների վերհանումից և լուծումներից:

Մասնաճյուղում, ընդհանուր առմամբ, կարիքների վերհանման գործընթացի արդյունավետությունը ապահովվում է վերհանման մեխանիզմների բազմազանությամբ և խնդիրներին արագ արձագանքմամբ:

ՉԱՓՈՐՈՇԻՉ գ. ՄՈՒՀ-ը ստեղծում է լրացուցիչ պարապմունքների կազմակերպման և խորհրդատվություն տրամադրելու հնարավորություններ՝ ուսանողների արդյունավետ ուսումնառությանը նպաստելու համար:

Ուսանողների ո՞ր տոկոսն է տեղեկացված խորհրդատվական ծառայությունների մասին: Ուսանողների ո՞ր տոկոսն է ընդգրկված լրացուցիչ խորհրդատվական պարապմունքներում: Ուսանողների ո՞ր տոկոսն է բավարարված խորհրդատվական ծառայություններից:	*94,44%* 27,98% 89,3%	
Արդյոք ուսումնառողներին հատկացվու՞մ են խորհրդատուներ: Եթե ոչ, արդյոք դա նախատեսվու՞մ է:	Այո 	

Վերլուծենք լրացուցիչ խորհրդատվական պարապմունքների և ակադեմիական օժանդակություն ու ուղղորդում տրամադրելու համար գործընթացի կազմակերպման արդյունավետությունը:

Մասնաճյուղի քաղաքականությունը լրացուցիչ պարապմունքների կազմակերպման և խորհրդատվություն տրամադրելու ուղղությամբ ամրագրված է զարգացման ռազմավարական ծրագրի 1-ին (Խնդիր Iե, 6-րդ կետ) և 5-րդ (Խնդիր V բ, 5-րդ կետ), 6-րդ (Խնդիր VIբ, 5-րդ կետ)

նպատակներում, կրեդիտային համակարգով ուսումնական գործընթացի կազմակերպման կարգում (11. Ուսումնական խորհրդատուների ծառայությունը):

Ուսումնական խորհրդատուների (կուրսղեկ) ծառայությունը ԵՊՀ Իջևանի մասնաճյուղում գործում էր նախքան կրեդիտային համակարգին անցնելը: Յուրաքանչյուր կուրսի համար կուրսղեկ էր ընտրվում հիմնական մասնագիտական առարկաներ դասավանդող դասախոսներից մեկը: Կուրսղեկը ուսումնական գործընթացին վերաբերող հարցերի շուրջ իրականացնում էր խմբային և անհատական խորհրդատվություններ, ներկայացնում էր ուսանողների ուսումնական շահերը:

Ըստ կրեդիտային համակարգով ուսումնական գործընթացի կազմակերպման կարգի յուրաքանչյուր մասնագիտության ուսանողներին կցվում է հիմնական մասնագիտական առարկաներ դասավանդող դասախոսներից մեկը՝ որպես ուսումնական խորհրդատու: Ուսումնական խորհրդատուի գործունեությունը կանոնակարգելու համար մշակվել է «ԵՊՀ ԻՄ-ում ուսումնական խորհրդատուի գործունեության կանոնակարգ»-ը:

Խորհրդատուները միավորվում են խորհրդատուների խորհրդում, աշխատում են ըստ հաստատված տարեկան աշխատանքային պլանի և յուրաքանչյուր կիսամյակի վերջում ներկայացնում են հաշվետվություն ֆակուլտետային գիտական խորհրդին և խորհրդատուների խորհրդին՝ կիսամյակի ընթացքում կատարած աշխատանքների մասին:

Խորհրդատուն ներկայացնում է ուսանողների ուսումնական շահերը, ուսումնական գործընթացի հետ կապված տարաբնույթ հարցերի շուրջ նրանց համար պարբերաբար կազմակերպում խմբային և անհատական խորհրդատվություններ:

Խորհրդատուն ուսանողին ծանոթացնում է կրեդիտային համակարգով ուսումնառության ձևին, ուսանողի իրավունքներին և պարտականություններին, մասնաճյուղի ներքին կանոնակարգերին, օգնում է ուսանողին իր ուսումնական ծրագրի համար որոշակի կամընտրական մասնագիտական դասընթացներ ընտրել: Խորհրդատվական ծառայություններից օգտվում են բոլոր ուսանողները:

Մասնաճյուղի ամբիոններում կազմվում են խորհրդատվական պարապմունքների տարեկան աշխատանքային պլան-ժամանակացույցեր, որոնցով առաջնորդվում են և' դասախոսները, և' ուսանողները: ժամանակացույցերը և խորհրդատվական ծառայությունների վերաբերյալ այլ տեղեկություններ տեղադրվում են մասնաճյուղի պաշտոնական էլ. կայքում՝ յուրաքանչյուր ֆակուլտետի բաժնում նախատեսված «Խորհրդատվական ծառայություններ» ենթաբաժիններում:

Դասավանդման որակի և արդյունավետության վերաբերյալ ուսանողական հարցումների վերլուծությունը ցույց է տվել, որ ուսանողները բարձր են գնահատում խորհրդատուի աշխատանքը **/Նկար1, Նկար 2/:**



2015թ.-ին մասնաճյուղում իրականացված ԵՊՀ ԻՄ-ից ուսանողների բավարավածության ուսանողական հարցման արդյունքների համաձայն ուսանողները խորհրդատուի (կուրատոր, կուրսղեկ) աշխատանքներից բավարարվածությունը 1-ից 5 սանդղակով գնահատել են 4.81: ԵՊՀ ԻՄ-ում ստացած կրթությունից շրջանավարտների բավարարվածության գնահատման հարցման արդյունքների համաձայն ուսանողները խորհրդատուի աշխատանքներից բավարարվածությունը 1-ից 5 սանդղակով 2014թ.-ին գնահատել են 4.05, 2015թ.ին՝ 4.07:

Նկար 2. Բավարարվածությունը խորհրդատվական ծառայություններից



Բացի խորհրդատվական ծառայությունից՝ ամբիոնները ըստ հաստատված ժամանակացույցերի կազմակերպում են լրացուցիչ մասնագիտական խորհրդատվություն՝ տվյալ կիսամյակում ամբիոնի կողմից դասավանդվող առարկաների գծով: Նախքան կրեդիտային համակարգին անցնելը լրացուցիչ պարապմունքները նախատեսվում էին միայն քննությունների նախաշեմին, իսկ 2009թ.-ից իրականացվում են կիսամյակի ընթացքում:

Պարապմունքներին մասնակցում են այն ուսանողները, ովքեր դասավանդվող առարկաներից ունեն լրացուցիչ խորհրդատվության անհրաժեշտություն՝ կապված տվյալ թեման չյուրացնելու, տվյալ դասից բացակայելու հետ և այլն:

Ավելի բարձր կուրսերում խորհրդատվական պարապմունքները ներառում են նաև կուրսային և ավարտական աշխատանքների, պրակտիկայի ոլորտը: Ամեն ուսանողի կցվում է ամբիոնի մեկ դասախոս: Խորհրդատու-դասախոսը օգնում է ուսանողին՝ կողմնորոշվել կուրսային և ավարտական աշխատանքների թեմաների ընտրության հարցում, ուսումնական պրակտիկայի հետ կապված գործընթացում՝ պրակտիկայի անցկացման վայրի, նախապատրաստական աշխատանքների հարցում:

Նկար 3. Տեղեկացվածությունը և ընդգրկվածությունը լրացուցիչ խորհրդատվական պարապմունքներում



2015թ.-ին մասնաճյուղում իրականացված ԵՊՀ ԻՄ-ից ուսանողների բավարավածության ուսանողական հարցման արդյունքների համաձայն ուսանողները լրացուցիչ խորհրդատավական ծառայություններից բավարարվածությունը 1-ից 5 սանդղակով գնահատել են 4.12:



Խորհրդատվական ծառայությունների արդյունավետության բարձրացմանը նպաստում են նաև բարձր առաջադիմություն ունեցող ուսանողների ներգրավվածությունը (ակադեմիապես թույլ համակուրսեցիների հետ աշխատանքը քննաշրջանին պատրաստվելիս), «Լավագույն կուրս», «Լավագույն ուսանող» անվանակարգերի առկայությունը, խորհրդատու-ամբիոն-դեկանատ արդյունավետ փոխհամագործակցությունը (ուսանողների բացակայությունների հաշվառման էլ. համակարգ, «Supervision YSU» ավտոմատացված էլ. համակարգ), խորհրդատուի կողմից ուսանող-մասնաճյուղ-ծնող կապի արդյունավետ իրականացումը:

ՉԱՓՈՐՈՇԻՉ դ. ՄՈՒՀ-ում սահմանված է ուսանողներին օժանդակություն և ուղղորդում տրամադրելու նպատակով վարչական աշխատակազմին դիմելու հստակ կանոնակարգ և ժամանակացույց:	
Ուսանողների ո՞ր տոկոսն է տեղեկացված իրեն վերաբերող վարչական ծառայությունների մասին:	84.43 %
Ուսանողների ո՞ր տոկոսն է օգտվում այդ ծառայություններից:	78.89 %
Ուսանողների ո՞ր տոկոսն է բավարարված այդ ծառայություններից:	94.6 %

Վերլուծենք լրացուցիչ վարչական օժանդակություն ու ուղղորդում տրամադրելու համար գործընթացի կազմակերպման արդյունավետությունը:

Մասնաճյուղի վարած քաղաքականությունը ուսանողներին լրացուցիչ վարչական օժանդակություն ու ուղղորդում տրամադրելու ուղղությամբ ամրագրված են զարգացման ռազմավարական ծրագրի 8-րդ նպատակում:

Մինչ այժմ մասնաճյուղում ուսանողներին օժանդակություն և ուղղորդում տրամադրելու նպատակով վարչական աշխատակազմը կատարում էր ուսանողների ընդունելություն՝ ըստ սահմանված ժամանակացույցի: Գործընթացը կանոնակարգելու համար 2013թ. մասնաճյուղում մշակվել է վարչական աշխատակազմին դիմելու կանոնակարգ և նոր ժամանակացույց:

Վարչական աշխատակազմին ուսանողները դիմում են նաև մասնաճյուղի պաշտոնական էլ. կայքի "Ուղղել հարց" հնարավորության միջոցով */Չափորոշիչ 4.բ/*, միջնորդավորված՝ ուսումնական խորհրդատուի, ուսանողական խորհրդի և ուսանողական գիտական ընկերության միջոցով:

Հրատապ հարցերի դեպքում ընդունելության ժամերից դուրս ևս ուսանողները կարող են դիմել ամբիոնի վարիչին, դեկանին, տնօրենին և այլն:

Դասավանդման որակի և արդյունավետության վերաբերյալ ուսանողական հարցումների վերջին 5 տարիների արդյունքները ցույց են տալիս, որ ուսանողները բավարարված են դեկանների և դեկանատների տրամադրած օժանդակությունից և ուղղորդումից:



Հաշվապահությանը ուսանողները դիմում են հիմնականում ուսման վարձի փոխանցման, մնացորդի, սոց. փաթեթի ուս. վճարից օգտվելու հարցերով:

Ուսանողների օժանդակության և ուղղորդման գործում կարևոր են նաև վարչական այլ աշխատակազմերի աջակցությունը: Յուրաքանչյուր բաժին իր իրավասության շրջանակներում օժանդակում է ուսանողին, կամ ուղղորդում համապատասխան ծառայությանը:

<u>ԵՊՀ ԻՄ-ում ստացած կրթությունից շրջանավարտների բավարարվածության 2014-2015թթ. հարցումների արդյունքներով</u> վարչական ծառայություններից բավարարվածությունը առավելագույն 5 միավորից գնահատվել է 4.30, 2013-14թթ.-ի 4.09 միավորի համեմատ:





ՉԱՓՈՐՈՇԻՉ Ե. ՄՈՒՀ-ում գործում են ուսանողների կարիերային նպաստող ծառայություններ:

Ուսանողների ո՞ր տոկոսն է տեղեկացված կարիերային նպաստող ծառայությունների մասին:	45.5 %
Ուսանողների ո՞ր տոկոսն է օգտվում այդ ծառայություններից:	31.4 %

Ուսանողների ո՞ր տոկոսն է բավարարված վերոնշյալ ծառայություններից:	86.4 %

Վերլուծենք ուսանողների կարիերային նպաստող ծառայությունների արդյունավետությունը/ կատարել համառոտ մեջբերումներ համապատասխան հիմքերից/:

Մասնաճյուղի քաղաքականությունը ուսանողների կարիերային նպաստող աշխատանքների ուղղությամբ ամրագրված է զարգացման ռազմավարական ծրագրի 2-րդ նպատակում (Խնդիր II ա, 4-րդ, 5-րդ կետեր), 6-րդ (Խնդիր VI ա՝ 2-րդ, 3-րդ, 5-րդ կետեր), 8-րդ (Խնդիր VIII բ՝ 3-րդ կետ) նպատակներում, «Երևանի պետական համալսարան» հիմնադրամի Իջևանի մասնաճյուղի կանոնադրության (**«XI. ԵՊՀ ԻՄ-ի աշխատողները և սովորողները»՝ 75/9**):

Մասնաճյուղում 2009թ.-ից գործում է Շրջանավարտների և կարիերայի կենտրոնը, որի նպատակներից է մասնաճյուղի ուսանողների մոտ ուսումնառության հետ զուգահեռ աշխատանքային որոշակի փորձի ձևավորումը, կարիերային նպաստող աշխատանքների կազմակերպումը, աշխատանքային շուկայում մասնաճյուղի ուսանողների և շրջանավարտների մրցունակության բարձրացումը: Կենտրոնն իր գործունեությունը իրականացնում է տնօրենության կողմից հաստատված տարեկան աշխատանքային պլան-ժամանակացույցով:

Շրջանավարտների և կարիերայի կենտրոնը մասնաճյուղի պաշտոնական էլ. կայքում ունի առանձին բաժին՝ «Շրջանավարտ», որն ունի 4 ենթաբաժիններ: «Մրցույթներ, թափուր հաստիքներ» բաժնում տեղադրվում է տեղեկատվություն ՀՀ աշխատաշուկայի թափուր աշխատատեղերի վերաբերյալ: «Խորհրդատվություն» ենթաբաժնում տեղադրված է խորհրդատվություն աշխատանք փնտրելու, ինքնակենսագրություն կազմելու, հարցազրույցի մասնակցելու մասին: «Շրջանավարտների և կարիերայի կենտրոն» բաժնում ներկայացված են կենտրոնի խնդիրներն ու գործառույթները: 2015թ. ստեղծվել է «Մեր շրջանավարտները» բաժինը, որտեղ տեղադրվել են մասնաճյուղի բոլոր շրջանավարտների ցուցակները՝ սկսած 1994թ.-ից:

Շրջանավարտների և կարիերայի կենտրոնը պատրաստել է հայտարարությունների անկյուն, որտեղ պարբերաբար տեղադրվում են աշխատաշուկայի մասին արդի տեղեկատվություն, մշակել և տարածել է կենտրոնի մասին տեղեկատվական, գովազդային թերթիկներ:

2009թ.-ից տարին մեկ անգամ կենտրոնը կազմակերպել է կլոր սեղան՝ տարածաշրջանի գործատուների, զբաղվածության կենտրոնի ներկայացուցիչների, ուսանողների, դասախոսների մասնակցությամբ, որտեղ քննարկվել են աշխատաշուկայի արդի պահանջները, ուսանողների անհրաժեշտ մասնագիտական հմտությունների շրջանակը, ներկայացվել են թափուր աշխատատեղերը և կատարվել աշխատանքի ընդունման կոնկրետ առաջարկներ:

2012թ. դեկտեմբերի 13-15-ը մասնաճյուղում իրականացվել է «Աշխատանքի տոնավաճառ. առաջին քայլեր դեպի աշխատանք» ծրագիրը: Ծրագրին մասնակցող շուրջ 25 ուսանողներին ներկայացվել են աշխատանքային պարտականությունները և իրավունքները, աշխատանքի փնտրման, ինքնակենսագրության կազմման, գործատուին դիմելու և աշխատանքային հարցազրույցին ներկայանալու ձևերը: Ծրագրի ավարտին կազմակերպվել է աշխատանքի տոնավաճառ մի շարք կազմակերպությունների ներկայացուցիչների մասնակցությամբ, որոնք ներկայացրել են իրենց կազմակերպությունների գործունեության ուղղվածությունը և թափուր աշխատատեղերը, պատասխանել ուսանողներին հետաքրքրող հարցերին: 2015թ. ևս մասնաճյուղը մասնակցել է աշխատանքի տոնավաճառի՝ ներկայացնելով իր թափուր աշխատատեղերը:

2015թ.–ից շրջանավարտները հնարավորություն ունեն գրանցվելու մասնաճյուղի «Կադրային բանկ»-ում, որի շնորհիվ նրանք հետագայում մրցութային կարգով կկարողանան համալրել

մասնաճյուղի դասախոսական, վարչական և ուսումնաօժանդակ անձնակազմը: Մինչ օրս գրանցվել են շուրջ երեք տասնյակ շրջանավարտներ, որոնցից 3-ն արդեն ընդունվել են աշխատանքի մասնաճյուղում:



Մասնաճյուղում ուսանողների կարիերային նպաստող արդյունավետ ծառայությունների մատուցմանը խոչընդոտում են ՀՀ աշխատաշուկայում գործազրկության բարձր տոկոսը, մասնագիտական աշխատուժի շուկայի դեռևս չձևավորված լինելու հանգամանքը: Այդ աշխատանքներին խոչընդոտում է նաև շրջանավարտների հետ թույլ հետադարձ կապը, որի պատճառով՝ Շրջանավարտների և կարիերայի կենտրոնն իր ստեղծման օրից աշխատանքներ է տանում շրջանավարտների կոնտակտային տվյալների հավաքագրման ուղղությամբ:

Շրջանավարտների հետ տարվող աշխատանքները առավել արդյունավետ դարձնելու համար ստեղծվել է «Շրջանավարտների միություն» հասարակական կազմակերպությունը:

Ուսանողների կարիերային նպաստում է նաև Ուսանողական գիտական ընկերության գործունեությունը: Ուսանողները, մասնակցելով կազմակերպված գիտաժողովներին, գիտահանրամատչելի և գիտական զեկուցումներին, ավելի են խորացնում իրենց մասնագիտական գիտելիքները, ձեռք են բերում հետազոտական աշխատանքներ կատարելու հմտություններ, որը նպաստում է հետագայում ուսումը մագիստրատուրայում շարունակող ուսանողների գիտական գործունեության ձևավորմանը:

Ֆակուլտետներում ևս, տարբեր կազմակերպությունների հետ համագործակցելով, կատարվում են ուսանողների կարիերային նպաստող աշխատանքներ՝ սեմինարների, դասընթացների, պրակտիկ աշխատանքների, ճանաչողական այցերի, հանդիպումների ձևով, որոնք նպաստում են նրանց մասնագիտական կարողությունների և հմտությունների զարգացմանը (Զեկույց ԵՊՀ ԻՄ զարգացման ռազմավարական ծրագրի 2011-2015թթ. իրականացման վերաբերյալ, էջ 29-33):

2012թ.-ից մինչ օրս «Հայ-ֆրանսիական բարեկամություն և փոխանակում» կազմակերպությունը հովանավորում է մասնաճյուղի «Ֆրանսերեն լեզու և գրականություն» մասնագիտության ուսանողներին, ովքեր դպրոցներում վարում են ֆրանսերեն լեզվի խմբակներ, կազմակերպում միջոցառումներ՝ նվիրված հայկական և ֆրանսիական տոներին:

Խաղաղության կորպուսի կամավորները մասնաճյուղի հումանիտար գիտությունների ֆակուլտետում դասացուցակում հատկացված ժամերին վարում են անգլերեն լեզվի դասեր, գործում է անգլերենի ռեսուրս կենտրոն, որում ներգրավված ուսանողները զարգացնում են խոսակցական անգլերենի իրենց հմտությունները:

Հումանիտար գիտությունների ֆակուլտետում ուսանողների կարիերային նպաստող քայլերից է նաև օտարալեզու հյուրերի հետ հանդիպումների ժամանակ, օտարազգի դիտորդների հետ ընտրական գործընթացներին ուսանողների մասնակցությունը որպես թարգմանիչներ:

Մասնաճյուղը նախատեսում է կնքել համագործակցության համաձայնագիր Տավուշի մարզի տուրիզմի զարգացման գործակալություն հասարակական կազմակերպության հետ:

2015թ. ից Տնտեսագիտության ֆակուլտետը ուսանողների պրակտիկ կարողությունների, հմտությունների զարգացման, միջազգային փորձ ունեցող մասնագետների հետ շփման նպատակով համագործակցում է «Տավուշի մարզի տուրիզմի զարգացման գործակալություն» ՀԿ-ի հետ: Համագործակցության շրջանակներում «Սերվիս» մասնագիտության ուսանողները մասնակցում են սեմինարների, պրակտիկ աշխատանքների: Տնտեսագիտության ֆակուլտետի 8 ուսանողներ 2015թ. մայիսի 2-ին և 3-ին մասնակցել են «Էկոտուրիզմի կազմակերպման և կայուն զարգացման հիմնահարցերը» խորագրով ամառային դպրոցին:

Մանկավարժություն և հոգեբանություն մասնագիտության ուսանողները պարբերաբար մասնակցել են սոցիալական մանկավարժի միջազգային օրվան նվիրված միջոցառումների, վիկտորինաների, համատեղ քննակումների (02.10.2013թ., 02.10.2014թ.), որը նպաստել է նրանց մասնագիտական հմտությունների զարգացմանը, այլ բուհերի ուսանողների հետ համագործակցությանը, փորձի փոխանակմանը:

Բնական գիտությունների ֆակուլտետի և «Մոբայլ Ծրագրավորման Կենտրոն Իջևան» նախագծի համագործակցության շնորհիվ ուսանողները և շրջանավարտները 2013թ.-ից մասնակցում են ծրագրավորման դասընթացների, նրանցից 4-ն արդեն աշխատում է նորաստեղծ «Վեկտոր» ՓԲԸ-ում, իսկ 15-ը հաճախում են դասընթացներին:

2013թ. ֆակուլտետի և և Տավուշի թեմի առաջնորդարանի համագործակցությամբ 3-րդ և 4-րդ կուրսերի ուսանողների ու շրջանավարտների համար կազմակերպվել է սրբանկարչության դասեր: 2013-14 ուստարում ֆակուլտետի ուսանողների համար իրականացվել են ավանդական գոբելենագործության վարպետության դասեր՝ Մոսկվայից հրավիրված ՀՀ ժող. վարպետ Յու.Ս.Հովսեփյանի կողմից: Կիրառական արվեստի ֆակուլտետում ուսանողների կարիերային նպաստում է նաև նրանց մասնակցությունը կազմակերպվող ցուցահանդեսներին *(տես չափորոշիչ 2)*:

2013թ. մասնաճյուղի մեկ տասնյակից ավելի ուսանողներ, շրջանավարտներ և դասախոսներ մասնակցել են «Նոր մեդիա դպրոցի» քառամսյա դասընթացին: Նրանք ծանոթացել նոր տեխնոլոգիաների ընձեռած հնարավորություններին և պրակտիկ կիրառությանը: Ծրագրի ընթացքում մասնակիցները ձեռք են բերել քաղաքացիական լրագրության ոլորտի հմտություններ, հրապարակել են համայնքի խնդիրներին վերաբերող հոդվածներ:

Տարածաշրջանի գործատուների 50% մասնակցությունը մասնաճյուղի ամփոփիչ ատեստավորման հանձնաժողովների կազմերում հնարավորություն է տալիս ուսանողներին գերազանց դրսևորվելու դեպքում արժանանալ նրանց ուշադրությանը և աշխատանքի հրավեր ստանալ:

2015թ.-ին մասնաճյուղում իրականացված ԵՊՀ ԻՄ-ից ուսանողների բավարավածության ուսանողական հարցման արդյունքների համաձայն ուսանողները ֆակուլտետում իրականացված կարիերային նպաստող աշխատանքներից բավարարվածությունը առավելագույն 5 միավորից գնահատել են 4.61:

Այսպիսով ուսանողների կարիերային նպաստող հիմնական գործընթացները կատարվում են ֆակուլտետներում, այդ պատճառով անհրաժեշտ է, որ Շրջանավարտների և կարիերայի կենտրոնը համակարգի ֆակուլտետներում իրականացվող աշխատանքները, մշտապես հետևի աշխատաշուկայի պահանջներին և ապահովի համապատասխան տեղեկատվության տարածումը:

ՉԱՓՈՐՈՇԻՉ զ. ՄՈՒՀ-ը աջակցում է ուսանողներին՝ ներգրավվելու հաստատության գիտահետազոտական աշխատանքներում:

Ներկայացնենք ուսումնառողների մասնակցությամբ իրականացվող ծրագրերի ցանկը և դրանցում ներգրավված ուսանողների թիվն ըստ տարիների

	Գիտահետազոտական ծրագիր	**Ուսանողների թիվը**
1	Միգրացիայի և մարդկային կապիտալի վերարտադրության փոխառնչությունները ՀՀ-ում, 2012թ.-2014թ.	4

Ուսումնառողների հեղինակությանբ և/կամ համահեղինակությամբ տպագրված աշխատանքների ցանկը ներկայացված է ***/Հավելված 6.1(դ)/, ըստ քանակների ամփոփված են ներքոնշյալ աղյուսակում***

N	**Ֆակուլտետ**	**2011**	**2012**	**2013**	**2014**	**2015**
1	Հումանիտար գիտ. ֆակուլտետ	8	-	-	-	-
2	Տնտեսագիտության ֆակուլտետ	10	-	-	-	1
3	Բնական գիտ. ֆակուլտետ	7	4	1	-	-
Կիրառական արվեստի ֆակուլտետի ուսանողների մասնակցությունը ցուցահանդեսներին						
4	Ուսանող	14	24	20	23	41
	Աշխատանք	21	57	25	45	95
Թեմատիկ էքսիզներ						
5	Կիրառական արվեստի ֆակուլտետ, մագիստրատուրա			**19**		

Վերլուծենք մասնաճյուղի գիտահետազոտական աշխատանքներում ուսանողների ներգրավվածության արդյունավետությունը:

Մասնաճյուղի քաղաքականությունը գիտահետազոտական աշխատանքներում ուսանողներին ներգրավվելու ուղղությամբ ամրագրված է զարգացման ռազմավարական ծրագրի 2-րդ (Խնդիր II ա, 3-րդ, 4-րդ կետեր) և 5-րդ (Խնդիր V ա, V բ) նպատակներում, ԵՊՀ ԻՄ-ի կանոնադրության («III. ԵՊՀ ԻՄ-ի գործունեության նպատակը և իրավասությունը»՝ 12/3, «IX. ԵՊՀ ԻՄ-ում ուսումնական և գիտական գործընթացի կազմակերպումն ու ֆինանսավորումը»՝ 46, «XI. ԵՊՀ ԻՄ-ի աշխատողները և սովորողները»՝ 75/9, 75/19) և կրթության որակի ապահովման բնագավառում մասնաճյուղի քաղաքականության մեջ:

ՀՈԱՇ-ի պահանջներին համապատասխան բարձրագույն կրթության բակալավրի որակավորման (առաջին աստիճան) կրթական ծրագիրը կազմված է հիմնական, մասնագիտացված և կամընտրական դասընթացներից և չի նախատեսում գիտական հետազոտական աշխատանքների իրականացում, այդպիսի աշխատանքներ նախատեսված են մագիստրոսի որակավորման (երկրորդ աստիճան) կրթական ծրագրերում: ԵՊՀ ԻՄ-ն

հիմնականում իրականացնում է բակալավրական կրթություն, որն անցումային սահման է հանդիսանում մագիստրատուրա ընդունվելու համար, ուստի ուսանողների գիտահետազոտական աշխատանքների իրականացումը պարտադիր չէ:

Սակայն բակալավրական կրթական ծրագրով ուսանողներն իրականացնում են գիտահետազոտական աշխատանքներ՝ անհատական կամ ղեկավարների հետ համատեղ. գիտական զեկուցումներ են կարդում գիտաժողովներում, տպագրում են գիտական հոդվածներ: Այդ աշխատանքներին նպաստում է նաև Ուսանողական գիտական ընկերությունը:

Հաշվի առնելով վերջին տարիներին ուսանողների տպագրված աշխատանքների և գիտաժողովների մասնակցության քանակի նվազման միտումը, 2015 թ. մայիսի 2-ին մասնաճյուղում կազմակերպվել է «Ինչպես կատարել գիտահետազոտական աշխատանք» թեմայով սեմինար:

Մասնաճյուղը աջակցում է ուսանողների՝ միջբուհական գիտաժողովների մասնակցելուն:

2012 թ. մասնաճյուղի 1 ուսանող մասնակցել է միջազգային, 2 ուսանողներ՝ հանրապետական գիտաժողովների: 2013 թ. 8 ուսանողներ մասնակցել են հանրապետական գիտաժողովի:

«Միգրացիայի և մարդկային կապիտալի վերարտադրության փոխառնչությունները ՀՀ-ում» ծրագրի աշխատանքներում ընդգրկվել են նաև Տնտեսագիտության ֆակուլտետի բարձր կուրսի ուսանողներ՝ իրենց կուրսային աշխատանքերի համապատասխան թեմատիկայով (Զեկույց ԵՊՀ ԻՄ զարգացման ռազմավարական ծրագրի 2011-2015թթ. իրականացման վերաբերյալ, էջ 29):

Մասնաճյուղը մագիստրոսական կրթական ծրագիր իրականացնում է 2012թ.-ից՝ միայն «Կիրառական արվեստ» մասնագիտությամբ: Կրթական ծրագրով նախատեսված է գիտահետազոտական աշխատանքների, պրակտիկաների իրականացում և մագիստրոսական թեզի կատարում: Ըստ մագիստրոսական ծրագրի իրականացման կարգի յուրաքանչյուր ուսանողի առաջին կուրսից կցվում է գիտական ղեկավար, որը ներկայացնում է տարբեր գիտական ուղություններ: Ուսանողը ընտրում է կոնկրետ թեմա, և ստանալով հանձնարարություն, աշխատում է ողջ ուսումառության ընթացքում, որի արդյունքնում պատրաստվում է մագիստրոսական թեզը:

Մասնաճյուղի 2 ուսանողեր 2012 թ. ՀՀ կրթության և գիտության նախարարության կազմակերպած «Լավագույն ուսանող» հանրապետական մրցույթի «Գիտահետազոտական աշխատանք» անվանակարգում արժանացել են 1-ին և 2-րդ մրցանակների:

2014թ. փետրվարին «Հայկյան-2013» մրցանակաբաշխությունում մասնաճյուղի ՈՒԳԸ- ն հաղթող է ճանաչվել «Լավագույն մարզային ուսանողական ինքնակառավարման մարմին» անվանակարգում:

2011-14 թթ. ժամանակահատվածում մասնաճյուղի ուսանողների կողմից կարդացվել են շուրջ 55 ուսումնագիտական զեկուցումներ (Զեկույց ԵՊՀ ԻՄ զարգացման ռազմավարական ծրագրի 2011-2015թթ. իրականացման վերաբերյալ, էջ 32):

ՉԱՓՈՐՈՇԻՉ է. ՄՈՒՀ-ում գործում է ուսանողների իրավունքների պաշտպանության համար պատասխանատու մարմին:

Ուսանողների որ տոկոսն է տեղեկացված համապատասխան ծառայությունների վերաբերյալ:	82.6%
Ուսանողների ո՞ր տոկոսն է օգտվում համապատասխան ծառայությունից:	43.6%

Ուսումնառողների ո՞ր տոկոսն է բավարարված վերոնշյալ գործընթացից:	79.8%

Վերլուծենք մասնաճյուղում գործող ուսումնառողների իրավունքների պաշտպանության համար պատասխանատու մարմնի աշխատանքների արդյունավետությունը:

Մասնաճյուղի քաղաքականությունը ուսանողների իրավունքների պաշտպանության ուղղությամբ ամրագրված է զարգացման ռազմավարական ծրագրի 6-րդ (Խնդիր VI ա՝ 8-րդ կետ) նպատակում:

Մասնաճյուղի ուսանողների իրավունքներն ու պարտականությունները ամրագրված են ՀՀ օրենսդրությամբ («Կրթության մասին» ՀՀ օրենք, հոդված 49, «Բարձրագույն և հետբուհական մասնագիտական կրթության մասին» ՀՀ օրենք, հոդված 17, 3-րդ կետ), 25.09.08թ. գիտական խորհրդի նիստում հաստատված ԵՊՀ ԻՄ ներքին կարգապահական կանոններում:

Ուսանողներն իրենց իրավունքներին և պարտականություններին տեղեկանում են ուսումնական խորհրդատուի ծառայություններից, ուսանողական կառույցներից, օրինականության պահպանման և ուսանողների իրավունքների պահպանման հանձնաժողովից, կրեդիտային համակարգով ուսումնառության ուղեցույցից և դասընթացների տեղեկագրքից, մասնաճյուղի էլ. կայքից, հայտարարությունների տախտակից և այլն:

Ըստ <u>մասնաճյուղի ուսանողների բողոքների քննարկման կարգի</u> ուսանողները կարող են համապատասխան ֆակուլտետի մանդատային հանձնաժողովին ներկայացնել դիմում-բողոքներ պետական և ներբուհական կրթաթոշակների, ուսանողական նպաստների հատկացումների վերաբերյալ: Ներկայացված բողոքները քննարկվում են ֆակուլտետի մանդատային հանձնաժողովում, տրվում համապատասխան լուծումներ, կամ անհրաժեշտության դեպքում ներկայացվում են մասնաճյուղի մանդատային հանձնաժողովի քննարկմանը:

Նույն կարգի համաձայն՝ ուսանողները կարող են բողոքարկել ամփոփիչ ատեստավորման, բանավոր և գրավոր քննությունների արդյունքները:

Ամփոփիչ ատեստավորման կամ ավարտական աշխատանքի գնահատականը ուսանողը գրավոր բողոքարկում է ամփոփիչ ատեստավորման հանձնաժողովի նախագահին՝ արդյունքները հրապարակելուց հետո մեկ ժամվա ընթացքում: Հանձնաժողովի նախագահը բողոքի քննարկումը կազմակերպում է նույն օրը՝ տնօրենի կողմից նախապես հաստատված, հանձնաժողովի անդամ չհանդիսացող աշխատակցի և ուսանողական խորհրդի ներկայացուցչի մասնակցությամբ: Շրջանավարտի ներկայությամբ, հանձնաժողովը լսում է պատասխանի ձայնագրությունը, ապա բաց քվեարկությամբ կայացվում է որոշում գնահատականի բարձրացման կամ անփոփոխ թողնելու մասին:

2012թ. տնտեսագիտության ֆակուլտետում երկու ուսանող ըստ ամփոփիչ ատեստավորման արդյունքների բողոքարկման կարգի բարձրացրել են իրենց գնահատականները (տնտ. ֆակ. խորհրդի թիվ 9 նիստի արձանագրություն, 28.06.2012թ.):

Բանավոր քննության դեպքում ուսանողը մինչև քննասենյակից դուրս գալը բողոքը ներկայացնում է քննող դասախոսին, արդյունքից չգոհանալու դեպքում՝ նախ համապատասխան ամբիոնի վարիչին, այնուհետև ֆակուլտետի դեկանին և կազմված հանձնաժողովը, քննարկում է ու կայացնում որոշում քննության արդյունքի պահպանման կամ բարձրացման մասին:

Գրավոր քննությունների արդյունքները փակցվում են ֆակուլտետներում, ուսանողները բողոք ունենալու դեպքում եռօրյա ժամկետում բանավոր դիմում են նախ քննող դասախոսին, ապա ամբիոնի վարիչին, այնուհետև դեկանին: Արդյունքում գնահատականները ճշտվում են նախքան տեղեկագրերի սկանավորումը, որի պատճառով ֆակուլտետներում գրավոր և

բանավոր քննությունների արդյունքների վերաբերյալ բողոք-դիմումներ չեն ստացվել: Գործընթացն այս ձևով իրականացնելը պայմանավորված է «Supervision YSU» ավտոմատացված էլ. համակարգով քննական տեղեկագրերի սկանավորումից հետո անհրաժեշտ փոփոխությունների կատարման դժվարությունների հետ: Սակայն տեխնիկական խնդիրների պատճառով եղել են դեպքեր, երբ ստուգման գրքույկի և քննական տեղեկագրի գնահատականները չեն համընկել, որի մասին ուսանողները Ուսումնամեթոդական վարչություն են ներկայացրել համապատասխան բողոք-դիմումներ: Ուսումնամեթոդական վարչությունը, հիմք ընդունելով քննող դասախոսի զեկուցագիրը, գրավոր դիմել է ԵՊՀ, որտեղ էլ կատարել են անհրաժեշտ փոփոխությունները:

Ուսանողների գնահատականների վերաբերյալ բողոքարկումների թիվն ըստ ուստարիների						
Ուստարի / Ֆակուլտետ	2009-2010	2010-2011	2011-2012	2012-2013	2013-2014	2014-2015
Բնական գիտ. ֆակուլտետ	-	-	-	-	-	-
Հումանիտար գիտ. ֆակուլտետ	7	3	5	4	7	-
Տնտեսագիտության ֆակուլտետ	4	-	1	-	1	-
Կիրառական արվեստի ֆակուլտետ	2	1	2	-	1	-

Ուսանողների իրավունքների պաշտպանության հարցերով զբաղվող կառույցներից է Ուսանողական խորհուրդը՝ ուսանողների ինքնակառավարման, ընտրովի ներկայացուցչական մարմին, որում ընդգրկված են ուսանողների 5.1 % է՝-ը: Ուսանողական խորհրդի անդամները իրազեկում են ուսանողներին իրենց իրավունքների ու պարտականությունների մասին, կառավարման մարմիններում ներկայացնում, արտահայտում և պաշտպանում նրանց շահերն ու իրավունքները, մասնակցում մասնաճյուղում ներքին կարգապահության պահպանմանը, կազմակերպում ուսանողական և երիտասարդական տոների անցկացում, աջակցում ուսանողների հանգստի և ժամանցի կազմակերպմանը: Մասնաճյուղի էլ. կայքն ունի «Ուսանողական խորհուրդ» էջը, որտեղ տեղադրած են ուսխորհրդի տարեկան աշխատանքային պլանը և գործունեության հաշվետվությունները: 2015թ. ԵՊՀ ԻՄ-ից ուսանողների բավարավածության ուսանողական հարցման արդյունքում ուսանողական խորհրդի աշխատանքից բավարարվածությունը 5 միավորից գնահատվել է 4.24:



Ուսանողների իրավունքների և շահերի պաշտպանության իրավական գործընթացը համակարգելու նպատակով 2009 թ. փետրվարի 27-ին գիտական խորհրդի որոշմամբ մասնաճյուղում ստեղծվել է օրինականության պահպանման և ուսանողների իրավունքների պահպանման հանձնաժողով:

Հանձնաժողովին հիմնականում դիմել են բանավոր (2011թ.-ից մինչ օրս՝ 155 դիմում), ներկայացված խնդիրների մեծ մասը վերաբերել է ուսման վարձավճարների, փոխատուցման կարգի, ուսանողական նպաստների, պետական և ներբուհական կրթաթոշակների հատկացմանը: Ստացվել են նաև բողոքներ ընթացիկ և հանրագումարային քննությունների,

ստուգարքների արդյունքների վերաբերյալ, լսարաններում, սրահներում ջեռուցման, սանիտարական պայմանների ապահովման և վերաբերյալ: Ստացված բոլոր բողոքներին, սեղմ ժամկետներում տրվել է համապատասխան ընթացք:

2015թ. ԵՊՀ ԻՄ-ից ուսանողների բավարավածության ուսանողական հարցման արդյունքների համաձայն բավարարվածությունը օրինականության պահպանման և ուս. իրավունքների պաշտպանի հանձն. աշխատանքից 5 միավորանոց սանդղակով գնահատվել է 3.86 /Նկար2/:



2013-14թ. և 2014-15թ. ԵՊՀ ԻՄ-ում ստացած կրթությունից շրջանավարտների բավարարվածության հարցման արդյունքների համաձայն իրավունքների և շահերի պաշտպանության մարմնի ծառայություններից շրջանավարտների բավարարվածությունը աճել է 2.2%-ով (Նկար 3):



ՉԱՓՈՐՈՇԻՉ ը. ՄՈՒՀ-ում գործում են ուսանողների կրթական, խորհրդատվական և այլ մատուցվող ծառայությունների գնահատման և որակի ապահովման մեխանիզմներ:

Վերլուծենք մասնաճյուղում գործող ուսանողների կրթական, խորհրդատվական և այլ օժանդակող ծառայությունների գնահատման և դրանց որակի ապահովման մեխանիզմների արդյունավետությունը:

Մասնաճյուղի քաղաքականությունը ուսանողների կրթական, խորհրդատվական և այլ մատուցվող ծառայությունների գնահատման և որակի ապահովման մեխանիզմների ուղղությամբ ամրագրված է զարգացման ռազմավարական ծրագրի 1-ին (Խնդիր I բ, 2-րդ, 8-րդ կետեր), 6-րդ (Խնդիր VI ա, 1-ին կետ) նպատակներում, ԵՊՀ ԻՄ-ի կանոնադրության մեջ («III. ԵՊՀ ԻՄ-ի գործունեության նպատակը և իրավասությունը»՝ 5-րդ կետ, «IX. ԵՊՀ ԻՄ-ում ուսումնական և գիտական գործընթացի կազմակերպումն ու ֆինանսավորումը»՝ 45-րդ կետ) և կրթության որակի ապահովման բնագավառում մասնաճյուղի քաղաքականության մեջ:

Ուսանողների կրթական, խորհրդատվական և այլ օժանդակ ծառայությունների գնահատումը և որակի ապահովումը մասնաճյուղում իրականացվում են «ԵՊՀ ԻՄ-ում դասավանդման որակի և արդյունավետության վերաբերյալ ուսանողական հարցման», «ԵՊՀ ԻՄ-ում ստացած կրթությունից բավարարվածության վերաբերյալ շրջանավարտների հարցման», «ԵՊՀ ԻՄ-ից ներքին շահակիցների բավարարվածության հարցման», «ԵՊՀ ԻՄ-ի շրջանավարտների վերաբերյալ արտաքին շահակիցների կարծիքի ուսումնասիրության», «ԵՊՀ ԻՄ-ի կողմից կազմակերպված պրակտիկայի գնահատման» հարցումների միջոցով:

Հարցման արդյունքները մշակվում և վերլուծվում են համապատասխան բաժիններում, քննարկվում համապատասխան կառուցվածքային միավորներում և տեղադրվում մասնաճյուղի պաշտոնական էլ. կայքի «Որակի ապահովման գործընթացներ» էջում:

Հարցումների արդյունավետությունը ապահովելու նպատակով նույն ոլորտին վերաբերող հարցեր են ներառված տարբեր հարցաշարերում, որոնք հնարավորություն են տալիս ստուգել ստացված տեղեկատվության օբյեկտիվությունը: Օրինակ խորհրդատվական ծառայություններից բավարարվածության վերաբերյալ հարցեր են ներառված ԵՊՀ ԻՄ-ից ներքին շահակիցների բավարարվածության, ԵՊՀ ԻՄ-ում ստացած կրթությունից բավարարվածության վերաբերյալ շրջանավարտների և ԵՊՀ ԻՄ-ում դասավանդման որակի և արդյունավետության վերաբերյալ ուսանողական հարցման մեջ:

Հարցումների շարունակական բարելավումն ապահովելու նպատակով հարցաթերթերը պարբերաբար վերանայվում են:

Շրջանավարտների զբաղվածության մակարդակը վերջին հինգ տարվա համար (թվով):						
	Զբաղվածություն/ուսման շարունակություն	*2011*	*2012*	*2013*	*2014*	*2015 միայն հեռակա*
1	Ավարտելուց անմիջապես հետո	**220**	**246**	**110**	**82**	**30**
2	Նախքան ավարտելը	**50**	**65**	**30**	**40**	**63**
3	Մասնագիտությամբ	**65**	**82**	**48**	**43**	**33**
4	Ոչ-մասնագիտությամբ	**155**	**184**	**62**	**79**	**60**
5	Ավարտելուց հետո ուսումը շարունակող ուսանողների տոկոսը	**9**	**8**	**10**	**17**	**10**
6	Ավարտելուց 2-5 տարի հետո զբաղվածության մակարդակը	**56**	**55**	**50**	**60**	**55**
7	Գործազուրկ ուսանողների տոկոսը	**44**	**45**	**50**	**70**	**45**
8	Ավարտելուց 5 տարի հետո զբաղվածության մակարդակը					

Վերլուծենք Չափանիշ 4-ով նկարագրվող տիրույթում ԵՊՀ ԻՄ ուժեղ և թույլ կողմերը, արտաքին հնարավորությունները և վտանգները:

Ուժեղ կողմեր (Strengths)	**Հնարավորություններ (Opportunities)**
1. Մասնաճյուղում ուսանողներին վերաբերող գործընթացները կանոնակարգող փաստաթղթերի առկայությունը 2. ՄԿՊԿ բաժնի առկայությունը 3. Պետական քոլեջների հետ պայմանագրերի առկայությունը 4. Մասնագիտությունների պարբերաբար վերանայումը 5. Հեռակա ուսուցման համակարգի առկայությունը 6. Առկա և հեռակա ուսուցման համակարգերի	1. Մասնաճյուղի համագործակցությունը մարզի դպրոցների և պետական քոլեջների հետ 2. Այլ ՄՈՒՀ-երի հետ համագործակցություն, փորձի փոխանակում

մասնագիտությունների և համընկնելը և տարբեր լինելը 7. Որոշ մասնագիտությունների համար վճարովի համակարգում ընդունելության շեմի նվազեցում 8. Մասնաճյուղի մասնագիտությունների վարձավճարների ցածր լինելը 9. Մասնաճյուղի կառավարման, գործունեության գնահատման և որակի ապահովման գործընթացներում առկա ուսուցման համակարգի ուսանողների ներգրավվածությունը: 10. ՈՒԳԸ-ի և ՈՒԽ-ի ակտիվ գործունեությունը և համագործակցությունը այլ ՄՈՒՀ-երի հետ 11. Կրեդիտային համակարգով ուսումնառության ուղեցույցերի և դասընթացների տեղեկագրքերի առկայությունը 12. Բազմագործոն գնահատման համակարգի առկայությունը 13. Մասնաճյուղի և կիրառական արվեստի ֆակուլտետի բուկլետների առկայությունը 14. Ուսումնական խորհրդատուների ակտիվ գործունեությունը 15. Ուսանողների կրթական կարիքների վերհանման մեխանիզմների բազմազանությունը 16. Շրջանավարտների միության առկայությունը 17. Մասնաճյուղի պաշտոնական էլ. կայքի www. ijevan.ysu.am առկայությունը 18. Ուսանողների տվյալների և առաջադիմության էլեկտրոնային համակարգի, «Supervision YSU» ավտոմատացված էլ. համակարգի առկայությունը 19. ՄԿՈԱ բաժնի առկայությունը 20. Հարցումների արդյունքների վերլուծությունների և վիճակագրական տվյալների հավաքագրման և ամփոփման մեխանիզմների առկայությունը 21. Օրինականության պահպանման և իրավունքների պաշտպանության հանձնաժողովի կանոնակարգի և աշխատանքային պլանի առկայությունը	3. ԵՊՀ միջազգային կապերի օգտագործում 4. Շրջանավարտների և կարիերայի կենտրոնի համագործակցությունը գործատուների հետ 5. Մասնաճյուղի ուսանողական կառույցների համագործակցությունը մայր բուհի և այլ ՄՈՒՀ-երի ՈՒԽ-երի և ՈՒԳԸ-երի հետ: 6. Տարածաշրջանում լուրջ մրցակից ՄՈՒՀ-երի բացակայությունը

Թույլ կողմեր (Weaknesses)	Վտանգներ (Threats)
1. Հեռակա ուսուցման համակարգի ուսանողների պակաս ներգրավվածությունը մասնաճյուղի կառավարման, գործունեության գնահատման և որակի ապահովման գործընթացներում 2. Գնահատման համակարգի վերանայման ընթացակարգի բացակայությունը 3. Ուսանողներին մատուցվող կրթական, խորհրդատվական և այլ օժանդակ ծառայությունների մշտադիտարկման և գնահատման համակարգի անկատարություն 4. Ուսանողների կողմից տարբեր խնդիրներով վարչական աշխատակազմին դիմելու ընթացակարգերի անկատարությունը 5. Շրջանավարտների և կարիերայի կենտրոնի պասիվ աշխատանքը	1. ՀՀ-ում դիմորդների թվի նվազումը 2. Ուսման նկատմամբ շահագրգռվածության պակասը 3. ՀՀ-ում գնաճի բարձր մակարդակը 4. Ոչ պետական ՄՈՒՀ-երի հավատարմագրումը և հնարավոր մրցակցությունը մասնաճյուղի հետ 5. Աշխատաշուկայում մասնագիտությունների պահանջարկի անկանխատեսելի

6. Գիտահետազոտական աշխատանքներում ուսանողների պասիվ ներգրավվածությունը 7. Պրակտիկայի անցկացման պակաս արդյունավետությունը 8. Լրացուցիչ խորհրդատվական պարապմունքների իրականացման արդյունավետության պակասը 9. Արտասահմանյան ՄՈՒՀ-երի հետ մասնաճյուղի թույլ համագործակցությունը 10. Օտարերկրյա ուսանողների փոքր թիվը 11. Օրինականության պահպանման և իրավունքների պաշտպանության հանձնաժողովի մասին իրազեկվածության մակարդակի ոչ լիարժեքությունը 12. Տարածաշրջանում գիտամշակութային միջավայրի պասիվությունը	փոփոխությունները և գործազրկության բարձր մակարդակը 6. Ուսանողների որոշ մասի մոտ առկա անտարբերությունը սեփական իրավունքների պաշտպանության գործընթացի նկատմամբ 7. Շրջանավարտների հետ հետադարձ կապի ապահովման հնարավոր խնդիրները

ՀԱՎԵԼՎԱԾՆԵՐ

Հավելված 4.1. Ուսանողների հավաքագրում, ընտրություն և ընդունելություն

ա. Ուսումնական հաստատությունում ուսանողների թիվն՝ ըստ կրթական ծրագրերի և ուսուցման ձևերի.

Ուսանողների թիվը		2008	2009	2010	2011	2012
Բակալավրի	առկա	1234	1157	1132	811	637
	հեռակա	420	618	838	862	935
Մագիստրոսի	առկա	-	-	-	-	10

բ. Ուսումնառողների շարժունությունը /Ուսումնառողների շարժը վերջին 5 տարիներին/

Ուսանողների արտահոսք						
	Հաստատություն/երկիր	2008	2009	2010	2011	2012
1.	Երևանի պետական համալսարան / ՀՀ	*34*	*9*	*1*	*3*	*1*
2.	Երևանի գեղարվեստի պետական ակադեմիա / ՀՀ	*2*	-	-	-	-
3.	Երևանի գեղարվեստի պետական ակադեմիայի Դիլիջանի մասնաճյուղ / ՀՀ	*1*	-	-	-	-
4.	Հայաստանի պետական ճարտարագիտական համալսարան/ ՀՀ	*1*	-	-	-	-
5.	Գավառի պետական համալսարան/ ՀՀ	*1*	-	-	-	-
6.	Ռուսաստանի դաշնության ժամանակակից հումանիտար ակադեմիայի Կուրսկի մասնաճյուղ/ ՌԴ	-	*1*	-	-	-
7.	Խ.Աբովյանի անվան հայկական պետական մանկավարժական համալսարան / ՀՀ	-	-	-	-	*1*
8.	Հայաստանի պետական տնտեսագիտական համալսարան / ՀՀ	-	-	-	-	*1*
Ուսանողների ներհոսք						
	Հաստատություն/երկիր	2008	2009	2010	2011	2012
7.	Երևանի պետական համալսարան / ՀՀ	1	-	4	1	-
	այդ թվում՝ երկրորդ մասնագիտություն	-	-	2	1	-
8.	*Երկրորդ մասնագիտություն՝*	-	3	3	2	2

	ԵՊՀ Իջևանի մասնաճյուղ / ՀՀ					
9.	Խ.Աբովյանի անվան հայկական պետական մանկավարժական համալսարան / ՀՀ	3	2	-	4	-
	այդ թվում՝ երկրորդ մասնագիտություն	2	2	-	2	-
10.	Հայաստանի պետական ճարտարագիտական համալսարան / ՀՀ	1	1	2	1	-
	այդ թվում՝ երկրորդ մասնագիտություն	1	1	2	1	-
11.	Ֆիզիկական կուլտուրայի հայկական պետական ինստիտուտ / ՀՀ	1	1	1	1	-
	այդ թվում՝ երկրորդ մասնագիտություն	1	-	1	1	-
12.	Վանաձորի Հովհ.Թումանյանի անվան պետական մանկավարժական ինստիտուտ/ ՀՀ	1	-	-	1	-
	այդ թվում՝ երկրորդ մասնագիտություն	-	-	-	1	-
13.	Հայաստանի պետական ագրարային համալսարան/ՀՀ	-	1	-	-	-
	այդ թվում՝ երկրորդ մասնագիտություն	-	1	-	-	-
14.	Հայաստանի պետական ագրարային համալսարանի Վանաձորի մասնաճյուղ / ՀՀ	-	1	-	-	-
15.	Վանաձորի «Մխիթար Գոշ» հայ-ռուսական միջազգային համալսարան / ՀՀ	-	1	-	-	-
	այդ թվում՝ երկրորդ մասնագիտություն	-	1	-	-	-
16.	Գյումրիի «Պրոգրես» համալսարան/ ՀՀ	4	1	-	1	-
17.	Եվրոպական կրթական տարածաշրջանային ակադեմիա/ ՀՀ	1	-	-	-	-
18.	Երևանի կառավարման և ինֆորմացիոն տեխնոլոգիաների համալսարան / ՀՀ	1	-	-	-	-
	այդ թվում՝ երկրորդ մասնագիտություն	1	-	-	-	-
19.	Երևանի տնտեսաիրավագիտական համալսարան / ՀՀ	1	2	-	-	1
	այդ թվում՝ երկրորդ մասնագիտություն	1	2	-	-	1
20.	Երևանի «Գլաձոր» համալսարան/ ՀՀ	-	-	1	-	-
	այդ թվում՝ երկրորդ մասնագիտություն	-	-	1	-	-
21.	Երևանի Մ.Մաշտոցի անվան համալսարան/ ՀՀ	-	-	-	1	-
	այդ թվում՝ երկրորդ մասնագիտություն	-	-	-	1	-
22.	Երևանի «ՄՖԲ» ֆինանսական ակադեմիա/ ՀՀ	-	-	1	-	-
23.	Լ.Քալաշյանի անվան հայկական բաց համալսարան/ՀՀ	-	-	2	1	-
	այդ թվում՝ երկրորդ մասնագիտություն	-	-	1	1	-

գ. Շարունակական կրթություն

	ՇԱՐՈՒՆԱԿԱԿԱՆ ԿՐԹՈՒԹՅՈՒՆ					
24.	Իջևանի տարածաշրջանային քոլեջ / ՀՀ	1	1	4	-	2
25.	Տավուշի տարածաշրջան. պետական քոլեջ / ՀՀ	-	-	-	1	-
26.	Նոյեմբերյանի պետական քոլեջ / ՀՀ	-	-	-	1	-
27.	Արարատի տարածաշրջան. պետական քոլեջ / ՀՀ	-	-	-	1	-
28.	Դիլիջանի պետական քոլեջ / ՀՀ	-	-	-	1	-
29.	Բերդի պետական քոլեջ / ՀՀ	-	-	-	-	1

դ. Հեռացումներ և վերականգնումներ

Հեռացումներ և վերականգնումներ						
	Ուսանողների թիվ	**2008**	**2009**	**2010**	**2011**	**2012**

1	Դուրս մնացած ուսանողների թիվը/տոկոսը	35/2%	54/3%	65/3%	83/5%	60/4%
2	Վերականգնված ուսանողների թիվը/տոկոսը	18/1%	17/1%	31/2%	40/3%	35/2%